Հաստատում եմ ՀՀ Շիրակի մարզի
«Պեմզաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի
տնօրեն _____Է.Նազարեթյան

«ՊԵՄԶԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ-Ի

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

Scanned by TapScanner

Բաժին 1
Պարտադիր կրթության կենսագործում

	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետ	Պատասխանատու	Ծանոթություն
1	Կոմպլեկտավորել հաստատության դասարանները. երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	կատարված
2	Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	կատարված
3	Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում: Բոլոր դասարաններում ստեղծել դասարանական անկյուններ՝ այնտեղ փակցնելով դպրոցի կարգապահական կանոնները:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	կատարված
4	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	տարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	
5	Ուշադրության կենտրոնում պահել երկտարեցի և ետ մնացող աշակերտներին այն հաշվով, որ բոլորն էլ ընդգրկվեն դպրոց:	տարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	
6	Աշխատանք տանել 5-12-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ հոգեբան	
7	Պարտադիր ուսուցման գործընթացային մասնակից դարձնել ծնողներին և ծնողական խորհրդին:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	
8	Դժվար առաջադիմող և երկտարեցի աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	

Scanned by TapScanner

	հետաքրքրությունների, ընդգրկել արտադպրոցական խմբակներում, ակումբներում:			

Բաժին 2

Աշխատանք մանկավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում

	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետ	Պատասխանատու	Ծանոթություն
1	Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, հարստացնել մեթոդական մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով:	օգոստոս - սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ գրադարանավար	կատար.
2	Դասղեկների աշխատանքները կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել 1-12-րդ դասարանների դասղեկների միավորումներ: Պլանները ներկայացնել հաստատման՝ նշված ժամանակահատվածում: Տարրական դպրոց- Միջին դպրոց- Ավագ դպրոց:	օգոստոս	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	կատար.
3	Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:	ուտարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	

Scanned by TapScanner

Բաժին 3

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետ	Պատասխանատու	Ծանոթություն
1	Ըստ պլանների կազմակերպել ուսուցումն ու դաստիարակությունը:	սեպտեմբեր	Տնօրեն փոխտնօրեններ	կատար.
2	Իրականացնել մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ, դասընթացներ՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	
3	Ավագ դպրոցում անցկացնել գիտագործնական կոնֆերանսներ աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ:	հունվար ապրիլ	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ ուսուցիչներ	կատար.
4	Կազմակերպել ցերեկույթներ նվիրված տարվա ընթացքում հիշարժան հոբելյաններին,տոներին, համապետական նշանակության միջոցառումներին, տոների և հիշարժան հոբելյարների առիթով լույս ընծայել պատի թերթեր, հրավիրել մասնագետներ տարբեր ուսումնական հաստատություններից(կազմել տարեկան միջոցառումների ցանկը):	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	
5	Անցկացնել <<Գիտակների մրցույթ>>:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	
6	Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խորը և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական աշխատանքի:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ ուսուցիչներ	
7	Հիմք ընդունելով աշակերտների ցանկությունը և ծնողների համաձայնությունը՝ կազմակերպել նախասիրական պարապմունքներ տարբեր առարկաներից՝ կնքելով ծնողների հետ համապատասխան պայմանագիր:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ ծնողներ	

Scanned by TapScanner

8	**Դասղեկական աշխատանք** Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման	սեպտեմբե- րի սկիզբ	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	Հաստատ.
ա/	Դասղեկներից պահանջել՝ աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ: Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն: Դաստիարակության հիմքում դնել միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ, դասվարներ	
բ/	Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ, դասվարներ	
գ/	Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազացնել անհարգելի բացակայությունները:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ, դասվարներ	
դ/	Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զրույցներ:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ, դասվարներ	
ե/	Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ /բաղկացած 3-5 հոգուց/, ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ, դասվարներ	Հաստատված.
զ/	Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցչի կապը:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	
9 ա/	**Գեղագիտական դաստիարակություն** Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	

Scanned by TapScanner

	բարելավման ուղղությամբ:			
բ/	Դպրոցում ստեղծել տնօրինությանը կից գեղագիտական դաստիարակության խորհուրդ:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	[illegible]
գ/	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները: Կանաչապատել դասասենյակներն ու միջանցքները: Ստեղծել վահանակներ:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ, գրադարանավար, կերպարվեստի և տեխնոլոգիայի ուսուցիչներ	
10 ա/	**Ֆիզիկական դաստիարակություն** Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության պայմաններում հարստացնել մարզական գույքով:	օգոստոս սեպտեմբեր	տնօրեն փոխտնօրեններ	[illegible]
բ/	Ստեղծել մարմնամարզական խմբակներ տարբեր մարզաձևերից:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	[illegible]
գ/	Տեղամասային բժշկի միջոցով պարզել աշակերտների առողջական վիճակը,հետևել պարապմունքների անցկացմանը:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ բուժքույր	
դ/	Կազմակերպել սպորտլանդիաներ կրտսեր և միջին դպրոցում:	նոյեմբեր ապրիլ	ուսուցիչներ	[illegible]
ե/	Անցկացնել միջդասարանական միջդպրոցական միջոցառումներ: Այն կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին:	հոկտեմբեր մայիս	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ ֆիզկուլտուրայի ուսուցիչներ դասղեկներ	[illegible]
զ/	Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգիենային:	մշտապես	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	
11	Բժշկի կամ բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց բարձր դասարանների սովորողների օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի մասին:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ բուժքույր	
12	Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել <<Առողջության օր>>: Դպրոց հրավիրել բժիշկներ՝ տարբեր մասնագիտությունների գծով: Կազմակերպել զրույց-	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ մասնագետ-բժիշկներ	

Scanned by TapScanner

	զեկուցումներ աշակերտների շրջանում:			
13 ա/	**Ռազմահայրենասիրական աշխատանք** Կազմակերպել հանդիպումներ հայկական բանակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ զինղեկ	
բ/	Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին:	սեպտեմբեր մայիս	Տնօրեն փոխտնօրեններ ուսուցիչներ դասղեկներ դասվարներ	Հաստատ.
գ/	Անցկացնել <<Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում>> միջոցառումներ:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ զինղեկ	
14 ա/	Աշխատանքային դաստիարակություն Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ Ուսուցիչներ	
բ/	Դպրոցամերձ հողամասի ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտների միջոցով, սեր արթնացնել դեպի աշխատանքը:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ ուսուցիչներ, տնտեսական աշխատանքների կազմակերպիչ	
գ/	Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամքի գործը: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույսերով կահավորեն կաբինետները, միջանցքներն ու սրահները:	ուստարվա ընթացքում	Դասղեկներ աշակերտներ	
15 ա/	**Գրադարանային աշխատանք** Կատարել դասագրքերի բաժանում և վարձավճարների հավաքագրում:	օգոստոս	Գրադարանավար Դասղեկներ	Հաստատ.
բ/	Դպրոցի հնարավորությունից ելնելով՝ հարստացնել գրադարանային ֆոնդը: Վերանորոգել գրադարանային ֆոնդում եղած դասագրքերն ու գրքերը:	ուստարվա ընթացքում, մշտապես	Գրադարանավար աշակերտներ	

Scanned by TapScanner

գ/	Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ:	ուստարվա ընթացքում	Գրադարանավար ԴԱԿ ուսուցիչներ	
դ/	Ստեղծել <<Պատանի ստեղծագործողի>> ակումբ: Նպաստել երեխաների ստեղծագործական մտքի զարգացմանը: Ի հայտ բերել տաղանդավոր աշակերտներին:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ Ուսուցիչներ	
ե/	Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ Գրադարանավար	Իրականաց.

Բաժին 4

Ներդպրոցական վերահսկողության համակարգ

	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետ	Պատասխանատու	Ծանոթություն
1	Յուրաքանչյուր ամսվա վերջում տնօրինության նիստում ներկայացնել և քննարկել սովորողների հաճախումների, կարգապահության և վարքի հետ կապված հարցերը:	ուստարվա ընթացքում	Տնօրեն փոխտնօրեններ դասղեկներ	
2	Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ մանկավարժական խորհրդում:	ուստարվա ընթացքում	Տնօրեն փոխտնօրեններ դասղեկներ	
3	Կատարել աշխատանքներ թույլ առաջադիմող աշակերտների հետ, աշխատանքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստում:	Հոկտեմբեր մարտ	փոխտնօրեններ դասղեկներ	Իրականաց.
4	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքները: Արդյունքները քննարկել դասղեկների մեթոդմիավորումում, տնօրինության ընդլայնված նիստերում:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	

Scanned by TapScanner

Բաժին 5

Աշխատանք ծնողների հետ

	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետ	Պատասխանատու	Ծանոթություն
1	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ Դասղեկներ	կատար.
2	Նախատեսել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև ծառացած համատեղ լուծման ենթակա հարցերը:	ուստարվա ընթացքում	Տնօրեն Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ ծնողխորհրդի նախագահ, դասղեկներ	
3	Կազմակերպել ծնողների համար անցկացվող զեկույցների և զեկուցումների թեմատիկ պլան:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ ծնողխորհրդի նախագահ	կատար.
4	Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ ծնողխորհրդի նախագահ	կատար.
5	Նպաստել ծնողական խորհուրդի գործունեությանը:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	
6	Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	
7	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքներին:	մշտապես	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	

Scanned by TapScanner

Բաժին 6

Կազմակերպական _ մանկավարժական աշխատանք

	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետ	Պատասխանատու	Ծանոթություն
1	Նշանակել դասղեկներ և դասվարներ:	Օգոստոս	Տնօրեն Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	[illegible]
2	Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն:	մշտապես	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ ուսուցիչներ	
3	Նշանակել ավագ հերթապահներ, պահանջել հերթապահներից՝ •Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքերում: •Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը: •Օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին:	մշտապես	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ	
4	Հետևել, որպեսզի դասղեկները պատասխանատվություն կրեն գույքի և անվտանգության կանոնների պահպանման համար:	ուստարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ	
5	Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները ըստ դպրոցի աշակերտական խորհրդի կանոնադրության	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ Տեղակալ ԴԱԿ աշակերտական խորհուրդ	[illegible]
6	Դասղեկների հետ վերջնականապես ճշտել սոցիալապես անապահով, երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով:	սեպտեմբեր	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ, ծնողխորհրդի նախագահ	[illegible]

Scanned by TapScanner

Ներառական կրթություն

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու անձ	Ծանոթություն
1.	Ներառական կրթությունը որպես նպատակ ամրագրել հաստատությունում գործող բոլոր օղակներում:	Տարվա ընթացքում	Տնօրեն փոխտնօրեններ	
2.	Ուշադրություն դարձնել ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներին , այդ թվում ուսուցիչների, ուսուցիչների օգնականների վերապատրաստումներին:	Տարվա ընթացքում	Տնօրեն փոխտնօրեններ	
3.	Իրականացնել երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:	Տարվա ընթացքում	Տնօրեն փոխտնօրեններ	
4.	Վերահսկողություն իրականացնել ԿԱՊԿ ունեցող սովորողների բազմամասնագիտական թիմի աշխատանքներին:	Տարվա ընթացքում	Տնօրեն փոխտնօրեններ	
5.	Ապահովել համապատասխան ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ:	Տարվա ընթացքում	Տնօրեն փոխտնօրեններ	
6.	ԱՈՒԻՊ-ները մշակել համաձայն հանրակրթական պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի, հաշվի առնելով սովորողների կարիքները հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը:	Տարվա ընթացքում	Տնօրեն փոխտնօրեններ	
7.	Ապահովել ԿԱՊԿ երեխաների մասնակցությունը համադպրոցական միջոցառումներին:	Տարվա ընթացքում	Տնօրենի ՄԿԱԳ տեղակալ դասղեկներ ծնողներ	

Տնօրենի ՄԿԱԳ-ի գծով տեղակալ [illegible] /Ա. Մարգարյան/

Scanned by TapScanner